

Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2022թ. փետրվարի 1-ի
N 1-02/22/9 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Ն.Ա.Միքայելյան



**ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգով սահմանվում է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան կամ ՇՏՀ) Որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումները, կառույցները, պաշտոնյաները և նրանց միջև պարտականությունների բաշխումը:
- 1.2. Կարգը մշակվել է ԱՀ օրենքների, Համալսարանի 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի, բուհի կանոնադրության և Որակի ներքին ապահովման քաղաքականության հիման վրա:
- 1.3. Որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորաբաժանումներն են՝
- Գիտական խորհուրդը,
 - Համալսարանի ռեկտորը,
 - Համալսարանի պրոռեկտորները,
 - Գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովը,
 - Որակի ապահովման բաժինը,
 - Համալսարանի Ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետների, դեպարտամենտների, ամբիոնների) ղեկավարները,
 - Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները,
 - Ուսանողները,
 - Արտաքին փորձագետները, շրջանավարտները և գործատուները:

**2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Որակի ապահովման համակարգում Համալսարանի Գիտական խորհուրդը՝

- քննարկում և հաստատում է որակի ապահովմանը և կառավարմանն ուղղված քաղաքականություններն ու ընթացակարգերը, կրթական ծրագրերի համալսարանական չափորոշիչներն ու որակավորման պահանջները, որակի ապահովմանն առնչվող կանոնակարգային և նորմատիվ փաստաթղթերը,
- իրականացնում է որակի ապահովման ներհամալսարանական գործընթացների արդյունքների և Գիտական խորհրդին կից Որակի կառավարման հանձնաժողովի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:

2.2 Որակի ապահովման համակարգում Համալսարանի ղեկտորը՝

- ղեկավարում է Համալսարանի որակի ապահովման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը, կարգաբերում համակարգի փոխկապակցությունը համալսարանական կառավարման այլ համակարգերի հետ:

2.3 Որակի ապահովման համակարգում Համալսարանի պրոռեկտորները՝

- իրականացնում են որակի ապահովման համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում են հիմնական ստորաբաժանումների միջև գործառնական կապերն ու փոխգործակցությունը՝ ֆակուլտետների, որակի ապահովման բաժնի, ուսումնամեթոդական բաժնի և այլ ստորաբաժանումների միջև,
- կառավարում են Համալսարանի ինքնագնահատման գործընթացը, ինքնագնահատման զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:

2.4. Որակի ապահովման համակարգում Համալսարանի Գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովը՝

- նախապատրաստում և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- հանդես է գալիս որպես փորձագիտական և վերահսկողական մարմին՝ գնահատելու որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին:

2.5. Որակի ապահովման համակարգում Համալսարանի որակի ապահովման բաժինը՝

- իրականացնում է որակի ապահովման համալսարանական համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև, մասնավորապես ֆակուլտետների (դեպարտամենտների, ամբիոնների), որակի ապահովման մասնագիտացված կառույցի և այլ առնչվող ստորաբաժանումների միջև,
- ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը, ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- կորդինացնում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթների և ընթացակարգերի իրականացումը,
- կազմակերպում է Համալսարանի ինքնագնահատման գործընթացը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:

2.6. Որակի ապահովման համակարգում Համալսարանի Ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետների, դեպարտամենտների, ամբիոնների) ղեկավարները՝

- պատասխանատու են ստորաբաժանման մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում են ստորաբաժանման կրթական ծրագրերի մշակման, իրականացման մոնիթորինգի, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,

- ստորաբաժանման շրջանակներում ապահովում են Համալսարանի որակի ապահովման քաղաքականության ու ռազմավարության իրականացումը,
- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակող ծառայություններ կրթական ծրագրերի իրականացման համար՝ ծրագրերի պահանջներին համապատասխան,
- կազմակերպում են ստորաբաժանման գործունեության ինքնավերլուծություն՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում:

2.7. Որակի ապահովման համակարգում Համալսարանի Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները՝

- վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
- վերահսկում են ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու են ֆակուլտետում ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև Համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:

2.8. Որակի ապահովման համակարգում Համալսարանի ուսանողները՝

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ընդգրկված են Համալսարանի Գիտական խորհրդում և նրա որակի ապահովման հանձնաժողովում,
- մասնակցում են Համալսարանի որակի ապահովման գործընթացներին որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ,
- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,

- ընդգրկված են Համալսարանի ֆակուլտետների խորհուրդներում, Համալսարանի Գիտական խորհրդի և ֆակուլտետների որակի ապահովման հանձնաժողովներում,
- համաձայն սահմանված ընթացակարգի մասնակցում են Համալսարանի ինքնագնահատման գործընթացներին և համապատասխան զեկույցի պատրաստմանը՝ որպես ինքնագնահատման աշխատանքային խմբի անդամներ:

2.9. Որակի ապահովման համակարգում Համալսարանի արտաքին փորձագետները, շրջանավարտները և գործատուները՝

- իրականացնում են կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն,
- ընդգրկված են շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում,
- Համալսարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին,
- կատարում են Համալսարանի գործունեության, Որակի ապահովման համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,
- մասնակցում են Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին:

3. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն փաստաթղթի ընդունումը և դրանցում փոփոխություններ կատարելը վերապահվում է Համալսարանի Գիտական խորհրդին:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական քարտուղար՝

Ն.Ա. Միքայելյան
Ա.Ա. Առաքելյան